

խղար (ինչքան) օր մարդ կէնէր, օր չընցնէր յառջևով, պալ կը բօ-
ուէր հեռուանց, կըսէր, «չիզամ, չիզամ (զամ) մարդ կը զարհուրէր,
կը փախնէր, չըր կըրնի չընցնի յառջևով:

«Պրերուց օր մէ, մարդուն մէկ, շատ դարտլի կեղնի, կըսէ, կե-
նամ երթամ էդ ճամբով, ուր քէֆն է, իմալ կեղնի, թըղ եղնի, բըլ-
քէմէ (թերևս) շրջի վըր ընձի էդ պալ, մեռնեմ, պըրճնամ ազատիմ:
Մարդն է, կէնի օր մօտենայ սպալին, պալ կը բօուայ, չիզամ, չիզամ»:

«Տօ՛ արի, կըսէ մարդ, օր եկար իմալ պտի եղնի, ես լէ Աստ-
ծուց զէն կուզեմ, դաս վըէս, մեռնիմ, պըրճնամ, ազատուիմ»:

«Աստծու հրամանքով, պալ կեղնի երկու տապակ, կը բացուի,
բէհսաբ (անհամար) ոսկի կիզայ թափի ցած, մարդ զոսկիք կը քօմէ
բերէ տուն, կը պըրճնայ ամէն դարդ ու ցաւից»:

Ն Ա Խ Ա Պ Ա Ղ Ա Ր Մ Ո Ւ Ն Ք

1) Բոյսերու մասին.

ա. Լօստակ.— լօշտակ աչնի (ճիշտ) մարդու նմանակ է, զլուխ,
ոտք, ձեռք ունի. ըսինք (ասենք թէ) օր ուզենան լօշտակ փորին
հանեն, պէք է թել մէ կապին վըր քօքին (արմատ), զթելն էցկեն
(անցկացնել) անօթի շան մէ վիզ, ուրանք փախնեն մէկ զեն (կողմ
ու հեռուանց շան հացի մէ կտոր ցուցուն. հանդէ (աւասիկ) շունն
կը ճորտկայ (կապած տեղից յանկարճ յարձակուել) զլօշտակ ուր քօ-
քէն կը պըծու, լէ (այ) մարդու հանգին (հանգոյն) ձէն կետայ, շուն
զէն ձէն կը լսէ տեղն ու տեղ կը փետնայ (փայտանալ, սատակել)
ուրանք կերթան կառնեն գքօք բերեն»:

բ. Նորգենի (կեչու մի տեսակը).— սորա փայտից եթէ մէկը
միշտ ձեռքն ունենայ՝ չու ոչ չբարե իրի:

«Ես Ստամբօլն էնք, կըսէր խաթցի հայ մէ, նորգենի փէտն
ի ձեռքս՝ մէջդան կը զվունէնք (պտտել), հաղմ՝ լէ տեսայ մարդ մէ
ընձի ռաստ եկաւ (հանդիպել), կանչեց զիսի ուր մօտ՝ ըսեց՝

«Էդ ինչ փէտ է»:

— Նորգենի:

«Յուստէն ես բերի»:

— Ըսի՛ մեր երկրէն, աչնի մեր սարէնիմ քաղի:

Ըսեց՝ «դու զիննս զըզրա տեղ»:

— Ըսի՛ զիննս:

Էդ մարդ կանչեց զիսի ուր տուն, բարիշաւ իմ հետ. զիմ տա-
րուայ դատք տուեց՝ չելանք չընկանք ճամբայ. եկանք Խլաթ, եկանք
մեր գեղ (Ջրհոր, Քրգուռ լեռան տակ), Ոլոր օր մութ ու լուս ելանք

ի սար. զնորգեանու ծառի տեղ ցուցուցի ուրեն, տուեց ընձի երկու հարկուք, փորել, փորեցի փորեցի՝ ես տեսայ կարմիր—շէկ օձ մէ՛ (հա՛ քրնց լծկտոր մէ—լծան չափ) դուս եկաւ կտտուուկ էր նորգեանու բոլոր (փաթաթուած), էլ չգեցայ, էդ մարդ հարկուք էր, թղթբաց էր ինչ էր, վիշաւ ի գուր, զօձ բռնեց դրեց ի տոպրակ, քանի մէ ոսկի յէ տուեց՝ ու զնաց հրաւ ուր նամբուն, ըշտէ (ահա) հըմա (այսպէս) հարկուք ունի նորգեանու:

(Պատմողը Բուլանըխցի է՝ Խլաթցիներէն առնելով):

Սրբապաշտութեան մօտ գտնուած ծառ ու ծառաստանը՝ սրբոց կը պատկանին, այդ փայտերից մի ճիւղ անգամ կտրող կամ տանողը, կամ կը բռնուի կամ ձախորդութեան կը հանդիպի: Այդ ծառերուն այցելողները իրենց շորերից մէկ մէկ կտոր կը փաթաթեն ծառերու ոստերուն, որպէսզի ամէն ցոյս (հիւանդութիւնք) այն տեղ մնան:

Երեք սրբազան և անձեռնմխելի ծառաստան կամ անտառակներ կը գտնուին Բուլանըխ գաւառը. մէկը Մէջտալու գիւղի ս. Յովհաննէսի ծառաստանը, միւսն՝ Նազուկայ լճի հիւսիսային ափի վրայ, Գրսայ ս. Յովհաննէսի (աւերակ մի վանք) ծառերը, և երրորդը Ներքին Բուլանըխայ Կուռի գիւղի առաջ գտնուած Գրսայ բլրակի հարկուք անտառակը:

Մի հին օրեայ նշանաւոր ծառ կայ Լաթար գիւղի մօտը. ուր ցաւազար մարդիկ ուխտի կերթան, և շորի կտորներ կը թողնեն այնտեղ, մօտիկ բնակիչները կը հաստատեն, որ գիշերով չոր փէտէ այդ ծառի վրայ:

գ. Մարտի փայտով եթէ մարդու կամ անասունի վարկեն, քիչ չէ փէտէ:

դ. Կարմիր իւծ (Adonis aestivalis) ծաղիկը եթէ քաղեն, ամանները կը կոտրուին, և այդ պատճառով էլ ծաղիկը իւր-իւր անունը ստացեր է:

ե. Երեխայոց կարգիլեն երբ իւր-իւր թերթիկները բերանին դրած կը փչեն, որովհետեւ հոգեւոր դժուար (ճիճ) կուռին:

զ. Հաց.— հոյս հարկ է, երբ գետին ընկնայ, պէտք է համբուրելով վերցնել և ուտել:

թխած հացը եթէ ուտել և դժուար, նշան է որ տարուայ բերքը առատ կը լինի:

Երեխայք եթէ հացը զնեն գլխու վրայ և ման գան, կը կարծուի, որ հոյս (ցորենը) կը թանկէ:

Տիւրք հացը եթէ չորս հոյս իւրեց կտան և համբաւ ստանալու նշան կը համարեն:

Դրկեցի տնէն շէտ փոխ տարած ժամանակ, մաղի մէջ դիպուած

ալիւրի սուր ծայրը կը կտրեն, որպէս զի ալիւր տուողի նոր հորը քիչ-քիչ չլինի:

Հաց ուտելու ժամանակ եթէ մէկը ազուտայ (ձգուտայ) կասեն, բա՛ն է՝ քիչ քիչ կեր:

Եթէ մէկի կոկորդի մէջ պատառ ասուռի (արգելուել) կասեն. սիրելին չիշեց զինք:

Խմոր պատրաստելու ժամանակ եթէ մի կտոր թունէ միկողմ. նշան է որ հիւր կուգայ:

է. Կերակուրի մասին.

ա. Ծննդեան տօնի հարիսան (Մարիամայ ճաշը), եթէ երեխայի մի որևէ անդամի վրայ քսեն և հոյս լիք, մազ չբուսիր ամենևին:

բ. Պառաւանքը թթու բռնած ժամանակ, դիտմամբ տանեցոց հետ կռիւ և աղմուկ կը սարքեն որ լաւ բերի: Երբ թթուն շատ ցէ (թունդ) լինի, կասեն բռնողը քիչ (աղմկարար) է:

գ. Որպէսզի կերակուրը չխանձրահամի (ալրեյահոտ), եփելուց չետոջ գդալով կերակուր կը դնեն պոտոտկի տակ, ասելով. «Թէ խանձրահամիս, եօթ պոռնիկի մեղքն ի վիզդ եղնի»:

դ. Եթէ մէկը ուշանայ և ճաշին չհասնի, կասեն, քիչ քիչ շուտ հասնողն ևս կը սիրուի իւր զոքանչից:

(Օղի խմելու ժամանակ վերջին կթղան որու բաժին որ ընկնայ, կասեն, զոքանջդ կը մեռնի):

ե. Երբ մի տեղ ճաշեն, ազահ մարդոց թեւերը կը ճտան (ձայն հանել) և իմանալով կը փութան մասնակցելու կերակուր ուտելուն:

զ. Ազալ տղայոց կը պատուիրեն որ կերակուրի ամանը ազահարար չբրթեն, որպէսզի հարսանիքի օրը չեւէ և բա՛ն չլինի:

3) Ջրի մասին.

ա. Ջրի մէջ միզելը մեղք կը համարուի:

բ. Անձրևելու ժամանակ, «երկուս քիչ քիչ կը թափի»:

գ. Երբ երկար ատեն անձրև չգայ, էւր և՛ քիչ զանգի (երբեմն ևս աւելի և ցախաւելի) վրայ ջուր կածեն:

դ. «Ձիւն ամբրով (ամբարած է) երկինք, ձմեռ օր կեղնի, հրեշտակներ ոտներով կը թափեն ցած»:

ե. Կարկուտն ևս կողորացնելով կը թափեն ցած:

զ. Ծով.—Մըր է՛ծ կորաւ յանկսկծի (յանկասկածի), սար զարկուայ, ձոր զարկուայ է՛ծ չգտայ, վինէ օր հարցուցի, ի՞նչու սալըղ տուող մէ չեղաւ, չարէս (ճարս) կտրաւ, չելայ գացի ճովու ափ (Պանայ ճովը կը լինի). ճով, ըսի, եկեր իմ քու մօտ դատաստանի, երկինք ու գետինք մըջ ընձի ու մըջ քրզի (իմ ու քու մէջ) դատաւոր, իմ է՛ծ կորեր է, յօրին չըս. իտայ, Իրեք հաղ թաքրիցի (կրկնել) ու դառձայ տուն,

ուր օր գացի ճովու մօտ, ճով զիմ էճ տուեր էր ուր (իւր) ափը, լէ (այլ) խեղդուի»:

Պատմողը հզնունեաց դաւառի Փրխուս գիւղացի Աւոյ անունով հալը կը լինի»:

«Միտքդ չի գայ. կասեն Կոփ գիւղացիք մէկմէկու, էն տարին օր Քորոյի մատակ ճնաւ. զիլ սպիտակ ձագմէ բերեց, էն չնւստ էր,— մատակ կերթաց մըջ ճովուն, (Խաչուայ) Կոփ Կէրնայ ի մատակ (մերձենալ), ձագ լէ ընդրէէ կեղնի»:

Հնչակաւոր Գօռ-օղլու Էօօնի ինչպէս ժողովուրդը կաւանդէ, ճովակն հրեղէն ձիու մի սերունդ է:

4) Հողի մասին.

Կլիմայի՝ մարդոց և կենդանեաց... վրայ արած ազդեցութիւնը՝ ժողովուրդը Կոփ — ջրի կուտայ:

ա. Երբ տարբեր մարդոց պատկանեալ երկու գոմէշները կռիւ անեն, իւր գոմէշի յաղթուելը չուզողը՝ ճաճուկ բուռ Գի Կոփ կը վերցնէ և կը ցանէ միւսի վրայ, որպէսզի նա փախչի Բ. Երբ մէկի մասին երկու մարդու մէջ ճաճուկ խօսակցութիւն լինի, մէկգմէկ կզգուշացնեն՝ ասելով. «Զգոյշ կաց թէ Կոփ էլ խաբար կը տանէ»:

5) Կենդանիներու մասին.

ա. Միտքդ մորթուց եթէ մէկը կտոր մի կապէ իւր անութի տակը՝ բախտաւոր կը լինի:

բ. Եգ գայլի միգուկը (ամօթոցքը) եթէ մէկը վրան կարէ՝ բախտաւոր կը լինի և ամէն գործի մէջ յաջողութիւն կունենայ:

գ. Գալի ճանը (վէգ) տանտիկինները կը կախեն իրենց գօտիներին, որպէսզի տան իւղին, ձձմին և թան ու թացանին չար աչք չբանի:

դ. Ամպամած խաւար գիշերը, գալը սև հող արտի մէջ սև այծի ուլը կարող է տեսնել:

ե. Մի եւշ այնքան արդար է, որ Կոփ-Կոփ ջրի մէջ Կոփ կը տեսնէ:

զ. Երկրագունդը Կոփ մի կոտոշներու վրայ է հաստատուած, երբ եզը քերուկի (քերել) Կոփ կեղնի:

է. Ձիաւորը ընկնալու ժամանակ՝ ձին կը բարեմաղթէ «Եօրդան (անկողին) դոշակ» իսկ էշը՝ Բոփ — Կոփ (մեռնելը կը խնդրէ):

ը. Իճերու մազերու մէջ Կոփ Կոփ, նորա համար արագաշարժ են:

թ. Աղօթրան բացուելու ժամանակ՝ ոչխարները կը դառնան «դէմ աղօթրան» աղօթելու համար:

ժ. «Աշխարհի բոլոր ճով է, մէջ կայ մեծ ձուկ մէ, փաթերէ գաշ-

խարք, թեզ մէ տեղ է մանցի՝ օր հասնի իրար, երբ հասան, աշխարհի վերջ լէ կիգայ։

ժա. Կատուն եթէ խոտ ուտէ՝ հաց կը թանկէ։

ժբ. Սև կատուն եթէ երկու մարդու մէջով անցնի՝ նոցա բախտը կը կապուի։

ժգ. Կատուն եթէ իւր քիթը քորէ՝ հիւր կուգայ։

ժդ. Կատուն Քրիստոսի դաստմալն է (թաշկինակ), «հեղ մէ սուտ մարգարէ մէ կը փոնտկայ Քրիստոսի յառէջ, ջուխտ մէ մուկ կը պատի (ընկնայ) պնչներուց, Քրիստոս լէ զուր դաստմալ կը թալէ մկներու հետև՝ կրսէ. «օրհնած, բռնէ զիդա անիծած», դաստմալ կեղնի հոս կը բռնէ զմկներ. էդ չապով ոն (ով) որ կատու մէ ըսպանէ, հարի եօթ պատարագ չետայ էն էլ, ուր հոգուն քաւութեն ու թողութեն չեղնի»։

Ս Ո Ղ Ո Ւ Ը Ե Ն Ե Ր .

ա. Գործն ատամ ցոյց չեն տար, որպէսզի չհամբէ ատամները, եթէ համբեց՝ ակուաները կը թափուին։

բ. Խաչափառ (խեչափառ) երբ մէկը կծեց, 7 դհօլ 7 գուռնայ, 7 օր՝ 7 դիշեր գարկին յետոյ կը պրծնայ։

գ. Օձուն աղու, (թոյն) չկայ, նորան աղու տուողը հոն է։

դ. Օձու շապիկ հետն ունեցողը՝ օձատար չիլնի. օձու շապիկը (մորթին) գտակի տակ կը պահեն՝ որ ծամերը երկարին։

«Օձու խազինին (ժողով) օր կը մօտենաս, հանդէ շարժու (արքայիկ օձ, օձերու թագաւոր), մըջ ուրանց նստուկէ, զլխու վրէն բռչամ (ծամ) ու երկու փիլան (փալուս) կոտոշներ ունի, հան՝ գբու թոււբան (փոխան) ու շուտմէ թալ վրէն, էն սհաթին շատմարան զուր կոտշներ կը թողէ, օր վերցուս բերիս՝ հանդէ դեղէ Էշուէ ու ամէն ցաւ ու չօւի»։

Այդ կոտոշները կը կոչուին օյու հլու (ուլունք). և երբ մի մարդ գուշակութիւն մի անէ և կատարուի, կասեն. օյու հլու՝ կօր օու փլուի։

Մ Ի Չ Ա Տ Ը Ե Ն Ե Ր .

ա) Արեւիկ (խխունջ) պատեանը մեծ քանակութեամբ ժողովուրդի մէջ կը գտնուի, որոնք կը կարեն երեխայոց զլխարկի և հանդերձներու վրայ որ շաշափի, Արեւիկի մի տեսակն է Ծհուկ կոչուածը, որ գարձեալ երեխայոց վրայ կը կապեն Եփեսոս հոտի (ծմրիլ, ճմրել, սիրտը մէջքը կոտրիլ)։

բ. Եթէ տան տախտի մէջ (չատակ) հրիւրէ դուրս գան, հացի առատութեան նշան կը համարուի։

գ. Միւս սպանած ժամանակ մէկ զմէկ օդնութեան կը կանչեն «ճրննէ լը խըշտ, ճրննէ լը պըշտ»։

Նյութ մէրէուան մէրքի մա կոշտ».
 (Սուսններով եկէք օգնութիւն, նոցա (մենք, մարդիկս) կէս մարդը մեզնից հէտ սպանեց):

Թ Ո Ն Ղ Ո Ա Ն Ա Ն Ե Ր .

ա. Պուլու (չոպու).—«Կնկաչ մէ շատ չար տղէ մէ կեղնի, ինչ կէնէ չէնէ՛ տղէն չթողէ օր զուր (իւր) զլուխ լուաչ, էն մէկ հեղ գօրով կը նստցու օր զլուխ լուաչ ու սանտրէ, էլման կիւաչ կը վրժվժաչ, զսանտր կը զարկէ զլուխ կանիճէ՛ կըսէ եղնիս դուդու սարերն ոլորտիս. տղէն կեղնի դուդու թունաչ երթաչ»:

բ. Անուշի ոստոստելուն ժողովուրդը այսպէս բացատրութիւն կուտայ. Նոչ կենդանիները ճապանի մէջ առած ժամանակ, բոլորի ոտքերը կապած էր. ջրհեղեղից չետոչ երբ մէկ մէկ արձակելով դուրս կը թողէր՝ ճնճուղը յամբերելով կապած ոտքերով դուրս թուաւ և մնաց այնպէս միշտ ոստոստող:

գ. Ագուս ևս նորա համար գեղեցիկ չէ կարող քապել, որ ուղեցեր է Կոնստանտնուպոլիս (սիրամարգ) պէս քապել, բաց սովորելու ատեն իւր նախկին քապէն էլ է մուացեր, և սինամալուքին էլ չէ կարող նմանուել:

դ. Ալուս նորա համար չէ կարող երգել միւս թուչնոց նման, որ երբ նոչ զրկեց ազուաւի չետեից շիւղ բերելու, ազուաւը նախանձելով խաբէութեամբ նորա լեզուի ճաչը կը կտրէ և կը մնայ այնպէս հէտ:

ե. Լալու (արագիլ).—Լակակ ամէն տարի իւր ձագերից մէկը կը խեղդէ. Աստծուն հոգու անելու համար, «Լակակները ուրանց երկիր մարդ են, գալու վախտ գետմէ կաչ, կիզան էն գետ կը լողկնան կը հաղնին հաւքու թեպուր՝ կիզան մեր երկիր. Երթլու վախտ լէ, կը քամեն Դիարբէքիբու երկիր բանձր սարմէ, հոգու կէնին Աստծուն, կը շողկնան կը դառնան եղնին մարդ՝ հապէմ (ապա) կերթան ուրանց աշխարք»:

«Մեր քիլվա (քաւոր, բարեկամ) Խասուն (քիլոդ) կերդուեր, զհոգին կը թալէր, կըսէր, ես թագաչ կարգուկ ենք. օրմէ իմ հոգու կեննաչ տան դուռ կը լուացուի, չապուջներ (ապարանջան) կը մոռնայ չոնի, կիզաչ տուն. հրտ չեռին (խկոչն) կը դառնայ աչքէ օր՝ ապուջան չըն գտնայ. Խասուն կըսէր, չընկաչ մըջ հոգու (հոգս, մտտանջուութիւն), շատ մտածեցի ճամբէ մէ չկրցայ օր գտնէնք. Ելայ զիմ պատրաստութեն տեսայ, գացի խարիպութեն, գացինք գացինք, հասանք ծովմէ, նստանք գամին (նաւ), շատ ու քիչ գացինք, հոգու (այեկոծութիւն) ելաւ գմեր գամին զարկեց քարեր կտորաւ, կտոր մէ տախտակ չընկաւ ձեռքսի, նստայ վրէն, Աստծու օղորմութիւն էր»:

բշեց հանեց զիսի կրկի մէ, ելաց ի ցամաք, գացի գացի, լուծք մէ ուստ եկաւ ընծի, ըսի երթամ տեսնամ ինչ երկիր իմ չընկուկ. մօտեցայ լճաբորին, ըսի.

«Բարի յաջողում».

—Վրնչ Աստու բարին, սար սարան ու սար ճաւան (զլլուուս և աչքերուս վրայ). Խնստչ, դու չօդա...:

«Տօ եա, ջանըմ, դու ձրնխս. ես գբըզի չըմ ճանչնայ, դու զիմ անուն կիտաս, ես գբըզի իսկի չըմ տեսերի»:

—2^Է ես ձեր դուան ճառի վրաուու շիւֆ Է՛, զիսի չըս ճանչնայ, թէ չըս աւդնայ լէ, հանդէ քու կնկայ ապուջան օր կորերէ, դրեր եմ իմ բնի տակ»։ Ես չաւդցայ.

«Ջանըմ, ըսի հանդէ դու մարդիս, դու իմալ կեղնիս լակլակ»:

—Կանի ըսեց, կը տեսնաս, ժամանակ մէ մանցի չօդի էդ մարդու տուն, վադէն օր թմաւ (ժամանակը լրացաւ), էդ երկիր ինչիս դար օր մարդ կէր, քօման, զիս լէ առան ուրանց հետ, եկանք գետի մէ մօտ լողկցանք. Աստու հրամանով մէկ մէկ հաւքու փօսթ (մորթի) իջաւ վրը մրզի, ես լէ ադոնց հետ եղանք շիւֆ. Կը թռնանք ու հայ եաւաշ եաւաշ (կամաց կամաց) կը մօտեանանք մեր երկրին, կը ճանչնամ օր իդա մեր սարնէ, ինա ֆլան ձորնէ, էնա ֆլան գեղնէ:

«Ըսի, աղբրդան, Աստու սերուն եղնի, ես մանցի լակլակ, իմալ կեղնի»:

Լակլակներ քօման մէկ տեղ, ուրանց լեզուով զրուցեցին. բերին զիսի թագադան լողկցուցին, Աստու հրամանով փօստ վրէմէս չեւաւ, ես եղայ էլման մարդ. Եկայ եկայ, մեր տուն, իմ կնիկ ու ճիթ թափան դուս, չընձան վզովս ուրախցան. Ըսի, ապուջներ գտեր Ե՛ք, ըսին, չէ. ձն գինայ ոն է տարի. Ըսի, ինչ կիտաք յեղնամ բերիմ,— ելայ ճառի զլլուսից, լակլիու բնի մեջէն հանի բերի գապուջներ:

Ջանըմ, ըսին, էդի ինչ բան է, էդ իմալ գեցար.

Ըսի, դա՛հ (Աստու ձձ վկայ) ըշտէ հալ ու քէֆիաթ իդա հըմալ, իմալ օր ես ձրզի խըսաէրի (պատմեցի)։ (Պատմողն է Կոփեցի Սարգրսեան Անտօն անուն անձը, որ լսեր է իւր եղբայր Սերովբից և սաքիրովս Խաստչի մօտիկ ազգականներից):

Գարուն երբ լակլակները կը վերադառնան, քար կը ձգեն դէպի վեր, որ Էւււ առատ լինի այն տարին.

գ. Զոււ եթէ քալորի նման կանչէ դժբախտութիւն պատահելու նշան կը համարուի և իսկոյն կը մորթեն:

է. Անձեղը եթէ տան մի դուուր նստի և ձայներ հանէ, համբաւ ստանալու նշան կը համարեն:

Մարդու մասին ունեյած կարծիքը և նախապաշարմունքը.

ա. Երկայն մարդու խելքը իւր չօքերն է (ճնկները)?

բ. Արճահասակները, «բռն» (հնարաղէտ, խորագէտ) կը լինին:

գ. Լայն բերան ունեցողը, ազահ:

դ. Սրտի վրայ խալ ունեցողը, բաղդաւոր կը համարուի, եթէ սիրտը շատ մազոտ լինի՝ մարդը գլխասիրտ կեղնի, մազ չունեցողը, «սփռ»:

ե. Փոսածև ճոճրակ ունեցողը՝ խեղ (խեղ, նախանձոտ):

6. Դեղեռու մասին. (անոտի ճարեր, նախապաշարմունք).

ա. Գրգռու.— Երբ մէկի վրայ գրգռու կոչուած ձներ լինին, սոցա թուով գարի առնելով, առաջին հացը թուկրի կողը զարկած ժամանակ, կը ձգէ թուկիրը և շուտով կը փախչի դուրս, որպէս զի գարեհատիկներու աչրուելու ձայնը չսէ, ու կը կանգնի տանիքի ծայրը.— գորտնուկները կը փչանան:

բ. Կծած կամ Կծիծ (ջղային և խորարմատ գորտնուկ).— Խնձոր մի լուսնի առաջին եղջիւրին (նոր) ցոյց կուտան և չորս կտոր անելով հողի տակ կը թաղեն, խնձորը փտելուն պէս՝ կոծոծներն ևս կը փչանան:

գ. Թռու.— մի տեսակ թեթև խոց, որ խոր արմատ չունի, կանուանուի Թռու, սա արծարծող մի վէրք է, որ շուտով կը տարածուի մէկ տեղից միւս տեղը, և այդ պատճառով կոչուած է Թռու, իբր թռչող, տարածուող. Տուածուրիկ (երկնատուր, նուիրական, տրուած) շնորհք ունեցող պառաւր կառնէ երկու հողի կոշտեր, և թրքելով վէրքերու վրայ, հող-կոշտերը կաշճհանի նման իրարու կը զարկէ հողը թափելու համար խոցերու վրայ. 3—4 անգամ կրկնելով, վէրքերը կառողջացնէ:

Նաև լուսնի նորը առաջին անգամ տեսնելու ժամանակ, պատի մօտ կանգնած, իբրև թէ լուսնից ծածուկ, ձեռքերը չետև տանելով պատից հող կը գողանան և կը ցանեն թրթռուկի խոցերու վրայ:

դ. Երեթիկ.— դեղնագոյն, աղտի նման վէրք մի է. որ աւելի երեսի, թևերու և ոտաց թութակներու վրայ դուրս կուգայ, սա ևս արծարծող է և լուսնի նոր ու փուլի հետ կերևայ ու կը կորսուի:

Տուածուրիկ շնորհք ունեցողը հիւանդի կշտին կանգնած, արագ կը կրկնէ հետևեալ սողերը.

«Երեթիկ, երեթիկ, բարի լուս քի,

Արտ մէ կորեկ իմ ցանի,

ձկոր-բկոր է դարձի ¹⁾,

իմ Տէր վրաւովն է քննի.

Չոր իս, ու չորանաս:

Փու, փու, փու, (երեք անգամ կը թ.քէ):

Նաև հին լուսնի արեւ ցոյց կուտան և օրհնել տալով կը քսեն երեթիկին:

Ե. Մոլոտո. — Սրտաժաժ կերակուր ուտելուց, մարմնոց վրայ խոշոր դիբով ուռուցքներ դուրս կուգան, որ սաստիկ քոր կը պատճառեն. — Մոլոքոր ունեցողը, պէտք է երեք կին ունեցողի (իբրև պոռնկի) տան տանիքի վրայ լողանայ, հողերու մէջ թաւալի և հաց թխած միջոցին նորա տնից մի հաց փախցնէ:

Գ. Խաթունիկ. — Այլի կոտերու վրայ դուրս տուած պղուկները (շիթ) կը կոչուին խաթունիկ:

Խաթունիկ ունեցողը, կասեն գիւղացիք, (եթէ տղամարդ է) — եւ (տանուտէր գիւղի) կը լինի: Այս շիթերը վերջացնելու համար, ցաւոտ աչքը թողնելով, ողջ աչքը թաւ տէր կը քաշեն, որպէս զի Խաթունիկ արեւ իջնից դուրսն է:

Է. Ձանձողիկ. — Փանր բոկուռուցը կամ բոկացաւը կը կոչուին ձանձողիկ (թեթև և ս, կանուանուի հոն): Երբեք բերող կին մի ձանձողիկով հիւանդացածի գլխու վերև կանգնած, իւր արեւ քաշէ կը ձգէ նորա վիզը և կը հարցնէ.

Կին

«Ձանձողիկ, չէր (ինչո՞ւ) իս եղի.

Հիւանդը

— Երկարիկ չէր իս բէրի.

Կին

«Ես բերի, ու պրծայ.

Հիւանդ

— Ես լէ եղայ, ու պրծայ:

(Երեք անգամ պէտք է հարցնել և պատասխանել):

Ը. Նա քո (քրդ. — շնարգելութիւն, կողացաւ). — Տուածուրիկ շնորհք ունեցող վարպետը մի արեւ (պղնձէ մեծ պնակ) դնել կուտայ հիւանդի կողքի վրայ և նետ մի առնելով ձեռքը՝ հիւանդին դէմ ու դէմ կանգնած, կտիպէ նորան հետեւալ քրդերէն հարցումներն ուղղել իրեն.

Հիւանդ

«Փը քէ դարէ տէչ».

«Յնատէն կուգաս».

¹⁾ Ձատ խոշոր և անդուր աչքերը կը կոչուին ձուր-բկոր, (տես մարդակազմաւան անունները).

Վարպետը
 —Փր ճիւղէ Տօլէ —Տօլայ? սարէն.
 Յիւանդ
 «Չի դր գետուի» . «Ինչ կը փնտռես» .
 Վարպետը
 —Ձունա նաքսէ —Նաքսի տեղը.
 Յիւանդ
 «Պէզը կարի» «կարճօղես չաղթել» .
 Վարպետը

—Բ'իզնա խուղէ.—Աստճու հրամանով: Վերջին պատասխանը տալով, իսկույն նետը կը թրբխկացնէ լանդառու վրայ: Միքանիսը միայն դանակ մի կառնեն և սովորական հարց ու պատասխանից չետոյ կը քսեն հիւանդի կողքին:

Նաքս գարկելու շնորքը ձեռքէ կամ քուռէ ս. Գէորգայ ¹⁾ տուրքը կը համարուի: Պոփ դիւղը մի տուն չալանի է նաքս գարկելու արհեստով, ի փոխարէն այդ տուածուրիկ շնորհքի՝ այդ տան անդրանիկ աղջիկները նուիրուած են ս. Գէորգին և երբ կամուսնացնեն առնուած Խուռ (բաշլըղ), իբրև աղջկանց գինը, ամբողջովին կը նուիրեն Փութիկի ս. Գէորգայ վանքին:

Թ. Վախ կերել.—Տուածուրիկ շնորհք ունեցողը վախեցողի դօտին առնելով մէկ ծալը ինքը կը բռնէ և միւսն հիւանդը, իւր արմուկը գօտու ծալի վրայ (իւր կողմից) դնելով կանգունի նման կը չափէ տանելով դէպի հիւանդի կողմը, երեք անգամ պիտի չափէ և ամէն մէկ չափելուն՝ ձեռքի թափը կը շրջէ այս ու այն կողմը, վերջին անգամ երբ ձեռքը չափը անցուց, այսինքն եթէ առաջին անգամ չափած էր մէկ արշին, վերջը $\frac{1}{2}$ արշին և ս նոցաւ, (իբր թէ ձեռքը կերկարի, երբ մարդը իսկապէս վախեցած է) աղօթք մի կը պտպտայ ասպակինելով շնորհատուր սուրբին՝ որ ինչ կրէ:

ժ. Խոլիցը.—(Coligue). Խոլինջի խեթը լաւացնելու շնորհքն կունենան այն ամէն անձինք, երբ տեսնեն որ շուշուֆ կուտէ՝ և այսպէս կ'ասեն. «ես տեսայ շուն շան միս կերաւ, իմ ձեռք խոլինջի

¹⁾ Զիրինի կամ փութիկի ս. Գէորգայ վանքը կը գտնուի Մոկաց նա. հանգի մէջ, ուր կը պահուի ամէն ժամանակ մի սուր, որու խորհրդով ճանապարհ կելնեն ուխտաւորները, այսինքն չկանչած՝ ոչ ոք չհամարձակուի վանքից դուրս ելնել: Այդ վանքի անուանով շրջող անձանց մօտ կը գտնուին կոնդակներ, ուր քուռէ անուան այսպէս բացատրութիւն տրուած է.—Քըրդեր ս. Գէորգայ մասունքը տանելով երկար ժամանակ դուրսի (պուտուկ, պտուկ, աման) մէջ կը պահեն և չկարողանալով կոչել դուրսի՝ ասեր են քուռէ? (Տես Հին հաւատք Հայոց Ալիշան եր. 49):

դեղ» (երեք անգամ), այնուհետև եթէ ասողը իւր ձեռքը խոնջի խեթ ունեցողի փորու կամ քամակի վրայ քսէ՝ ցաւը կանցնի:

Ս. Սարգսի պահոց շաբթուայ շաբաթ օրը երբ մէկը պաս պահէ, այլևս խոլինջ չեղնի: Խոնջի խեթը կանցնի նաև, երբ անդրանիկ մէկը հիւանդի վրայից երեք անգամ այս ու այն կողմը շէնքայ և ասէ, «քու փոր թորկէ, (թողնի) աղւտուն բռնէ, (երեք անգամ):

Ձիերու խոլինջը վերջացնելու համար կը հեծնեն և եթէ քո՛ւ եկեղեցու բոլորը կը պտտեցնեն:

Ժա. Զարբքի (բրդ. դեղնութիւն, jaunisse).—Տուածուրիկ շրնորհք ունեցողը հիւանդի յետևը կանգնած բոլորովին ծածուկ և չանկարձակի երեք անգամ մէկ մէկ ճքի (ապտակ) կը զարկէ հիւանդի վզին կամ երեսին:

Ժբ. Դու և Էլ (տենդ, ջերմ). դողցւորը առողջանալու համար պէտք է 1) սպանուածի գերեզմանի վրայ լողանայ. 2) ջրաղացի քուռ (նեքքնատուներ, ուր ջուր կը վազէ) մտնէ և լողանայ, 3) խանաղան (հին օջախ, մեծանուն) մի տնից, երբ հաց կը թխեն, հաց փախցնէ և ուտէ. 4) Թղթբացները թեղ մի 7 տեղով կը հանգուցեն, իւրաքանչիւր հանգուցի վրայ աղօթք ասելով և կուտան դողցւորին, որ ձեռքը և վիզը կապէ:

Ժգ. Հաւկուրուքիւն.—Կիրակմտին բան ու գործ անողը, պառաններու ասելով, կը լինի հաւիւր: Պէտք է ս. Յարութեան խթման երեկոյն մի հաւ մորթել, միխակի (խարանֆիլ, giroflée) ոստիկները ցցել հաւու լերդ ու թոքի մէջ, թոքերը եփելով ուտել, և ջուրը քաշել այքը:

Ժդ. Օդ. Հարբուլը կը կոչուի օդ: Երբ էշ գենուի (որ անսովոր բան է) օդ ու հազ կը տարածուի: Նաև՝ երբ արջի խոտ հետ պսակուի՝ օդ ցաւ կը տարածուի: Երբ մէկը միւսին յայտնէ՝ թէ ես օդ եմ իրո՞ւմ, միւսն իսկոյն կը պատասխանէ. «ջաղջէն կիզամ գլուխս այրոտ» կամ «մըջ ընծի ու մըջ քրզի (ընդ իմ և ընդ քո) իշու...»:

Օղացաւի հիւանդը եթէ կծէ մէկի գլուխը՝ ցաւը կանցնի անոր:

Ժե. Ձոպա (բրդ. Նալ (Ալք?) typhus).

«Քան քաւոր քուր (կնքաւորի քուր), գիշերսի չերզով տեսայ, քօմ մէջ ջէջ (քաւթաւ) պառաւ՝ զուրանց բըպուէճ (կիսախու) ճժեր էջկած էն (էին) չառջև ուրանց՝ ելան Պետոյ տնէն, գորով եկան մտան մըր (մեր) տուն. էդ ի՛նչ պտի եղնի»:

—Քան վո՛ւչ, յետ ու հեռուն եղնի, քան չէ՞ Պետոյ տուն քո՞ւ կայ, իսկի մէկ վըր ուր չոտաց սաղ կանուկ կան, չըմէն Ըտէ՛ճ (ձկներու նման թարփ ընկած) պատուկ են գետին:

«Քան պա (ապա) ի՛մալ կեղնի»:

—ԹՎանք մ' երկու դարտկէք (պարպել) մըջ տան, բալքի (թե-րևս) փախնին երթան, էն տարին օր մըր տուն շոպա չընկաւ, (եր-թալ եղնի՛ դալ չեղնի), լըմէնքս հիւնդցանք, քառսուն օր մարդ չեաւ վըր չտաց, հեղմէ սաղցանք, էլման կրկին տուեց, (կրկնել, երկրորդել)։

«Քան չօրին»։

—Քան մըր տանտկին (տանտիկինը) գհիւանդներու շորերն օր լուաց, «~~բոն~~ շոպն ~~բոն~~ է (թշնամի է), շոպէն լէ ինտտ էրեց (չամա-ուել)՝ գցաւ կրկնեց, եաման, եաման չեղնի չեղնի իդա (այս) օրեր սա-պոն բանցուք։

«Քան, կըսին գուրանք ցուցք (ցուց) կիտան»։

—Քան պա, օր մէ դուս ելալ, ես տեսալ մըր տանքի չետե քօմ մէ ճիժ կանուկ էն (էին) չօնի (անդ), կը «~~բոն~~» (տոթալ, եռալ, գեռալ, որդուն ըի նման վխտալ) չաւալ (առաջ) պգտկցան, եղան ամէկ (ամէն մէկ) քընց կորեկի մէ հատ, դառձան չերկնցան, չերկնցան, կորան իմ աչքերուց։

—Վճուլ, Յիսուս ու Քրիստոս, (խաչակնքելով), դու չետ ու հե-ռուն լնիս։

Ժգ. Ջնուոր կամ ժնոճոր (բրդ. տանըշտէ ռաշ, տած, եանի խարա, կուշար (կողերը, քովերը) սևցնող ցաւ)։—«էն տարին օր ձն֊ֆոր չընկաւ երկիր, (պատմողը մի ձերունի մարդ է) մարդու պէս աշկարայ կը զվըռնէն (պտտել), էն դահ (գեահ, ժամանակ) լէ, ամա (բայց) էն գահուայ Աստուածն է, ես ու մեր մշակ Պետոն յարտէն կիգէնք, հըտ ճամբուն միամիտ կը քէլէնք, հեղմ՝ լէ տեսալ Պետոն յանկակճի (չանկասկածի, չանկարձակի) տփուաւ ի գետին ու բօռաց (բղաւել)։ Ծաման, ըսեց, ես մեռայ, եաման ես մեռայ։

«Ինչ եղաւ քըզի, տղայ, քըզի ինչ պատահրաւ, հարցուցի ես»։

—Ա՛խ, ըսեց, ես մեռայ, տես, հանէ (ահա) գացին, երեք հոգի ին, մէկն կը մնէր (մանէր) պառու Գէվօն, չընկուկ էր չառջև ու-րանց, ձեռք ուրանց ~~հոն~~ ~~վայ~~ կէր, Գէվօն զիսի ընդոց ցուցուց, էն մէկ վարոցով խտեց կողսի, աչքէ, իմալ սևցաւ ել ինչ չերկնցուս (երկարացնեմ) հարի զՊետոն թալինք խտուն, գհոգին տուեց»։

«Եղաւ օր, ձն֊ֆոր քաշուաւ երկրէն, երկիր խաղնդաւ (խաղա-ղի), էդ հեղ չըմօր (ամէն օր) կը կանչէնք զՊառու Գէվօն կը հարցուցէնք ուրնէ (չիւմէ)։—Գէվոյ, կըսէնք, զԱստուած սիրես, արի խսա էրէ (պատմէ) սանք (տեսնենք) իմալ եղար ձն֊ֆորի (շատերը կասեն, գրողի) գէտ»։

—Ինչ խսա էնիմ, աղբէր, կըսէր Գէվօն, ձն֊ֆորի տարին գի-

շեր քնուկ էնք (քնած էի), Աստուած նշանց չիտայ, երկու հոգի եկան, աշխէշ շորերով. — Բարեք. քիթ ու մոխով (զարմանալի շորերով, զարմանալի տեսքով), զլուխ ուրանց, — Բարեք. ձեռք ուրանց, կանաչ ձեռք (դալար փայտ). չեյլի երթանք, ըսին ընձի, մըտ մեր ջոջաւոր, է՛հ, հոգիս խնտ էր օր չէրթէնք, գացինք մըտ ջոջաւոր, էն լէ սուր կնգուղով էր, կանանչ վարոցն ի ձեռք, էն օր տեսայ, մագերս կանան (կանգնել). լէշս (լաշ) փշամզաւ (բստմնիլ), ակուէք գակուէքս կը ջարդէր, հոգի ետս չիջ կոնի ի ձեռք. — Ջոջաւորն ըսեց մը վախենայ, զքրդի կանչեր ենք, օր չընկնաս մեր յառջև մըրդի մարդ նշանց տաս. Յրնկանք տներ, հա՛ յօղա. հա՛ յօնա (այստեղ և այնտեղ), հա՛ իդա տուն. հա՛ ինա տուն, տուն մ՛ օր կէրթէնք, գկանանչ վարոց վին (որուն) օր խտէն, էն էր, էն սհաթին կը գարկուէր, կը մեռնէր. Ջնոփորսեր շատ փայ (մեծ մաս) գիշերներ կը զվրռնէն, վախտ վախտ լէ, ցերեկով.

«Այնի (ճիշտ) Ջնոփորի տարին. կը պատմէ մի ուրիշը. ցաւ կընկնայ քրդու մէ տուն, զընդրա (նորա) եօթ տղէն լէ կառնէ տանի (մեռցնել), քուրդ՝ կը փախնի կերթայ հեռու երկրներ, երկիրն օր կը խաղնդի, կը դառնայ կիգայ տուն, զըռ (դեռ) չըր նստի տուն, Ջնոփոր զգլուկ կը կախէ չերդիկէն (երդիք), կը հարցրու.

«Տու հաթի». — «Դու եկար».

— Արէ, ազ հաթում, — Այո՛, ես եկայ,

Ջնոփոր,

«Տու հաթի, ոլահ ապժի հաթում.

«Դու եկար, Աստուած վկայ, ես էլ եկայ».

Քուրդն օր կը լսէ զՋնոփորի ձէն, տեղոց տեղ կը չորնայ. Ջնոփորը հեռացնելու համար, հայերը գիւղերու չորս կողմը խաչարձաններ կը կանգնեն, իսկ Քուրդերը հետեւեալ միջոցն ի գործ կը դնեն. Մի մարդ կուղարկեն իրենց գօռները (գերեզմանոց) ուր պէտք է նա բարձր կանգնի և իրենք ներքևից հարցնեն.

«Մտտոյ կամ հասոյ, ալլևս տեղ կնչ որ մեռել բերենք».

Քօռները կեցողը կը պատասխանէ. Աէ, չէ տեղ չկայ, մի բերէք.

Ջնոփորը խղճալով ջարդը կը վերջացնէ.

Մի անգամ Քուրդեր Կոփ գիւղացի Ջուրդար անունով հայն կուղարկեն իրենց գերեզմանոցը, և երբ ներքևից, «Ջուրդար, ալլևս տեղ մնաց, որ մեռել բերենք» կը հարցնեն՝ նա կը պատասխանէ. բերէք այստեղէն մինչև Երզրում տեղ կայ. կը չարձակուին Ջուրդարի վրայ որ սպանեն, բայց խոյս տալով կազատուի.

Ժգ. Կասողամ օան խաձաձի դեղեր. —

ա. Որու շուն որ կձէ մի մարդ, նորա (շան տիրոջ) տան թըրթ-

խորհրդ (մաշեա) մի կտոր պէտք է բերել և կապել վերքի վրայ:

բ. Վկրաւոր մարդու բոլորը կը հաւաքուին մի քանի մարդիկ և 7 օր 7 գիշեր խաղալով, պարելով դուարձայի պատմութիւններ անելով շին թողներ որ երբէք քնանայ, որովհետեւ եթէ քնանայ, վատ և դարհուրելի երազներ կը տեսնէ և վախենալով չէ կարող հարգել:

գ. Կճող շունը երկու կտոր անելով վերաւորը մէջ տեղից կանցկացնեն:

Կատղած շունը սատկեցնելու համար, քուէ կը մաղեն վրան:

7) Տան Բազմ (դէօվլէթ, հարստութիւն) կամ Բազմ:

ա. Տեսանք, որ Ջւտոնները դուրս արած ժամանակ ախուռի հարկէ Բազմ ոչ ոք զողնոցով չզարկեր, որպէս զի Բազմը չխառվի երթալ: Գոլվաթի բնակութեան տեղը մտուրի գլուխն է:

Մի մարդու տան Բազմը կը խռովի՝ տնից կենէ նստի մարազը. տանուտէր եղբայրներից մէկը երթալով կը տեսնէ մի ճերուհի, մինակ նստած մարագի մէկ գլուխը:

«Կրտէ, դու ձրն իս»:

— Կրտէ, ես քու տան դոլվաթնիմ՝ խռովերիմ, պիտի թողիմ երթամ:

„Կրտէ, կերթաս. կերթաս, կը խնդրիմ քրզնէ, որ իմ Բազմ (գոմէշները) չառնիս ընձիւ, բաշխիս ընձիւ“:

— Հայդէ, բաշխեցի:

Սա կուգայ տուն, միւս եղբոր իմաց կուտայ, թէ մեր դոլվաթը խռովեր է, կերթայ, այժմ նստած է մարազը. ես գնացի խնդրեցի, որ գմշտան բաշխէ ընձի, բաշխեց, դու լէ գնա ուրիշ բան մէ խնդրէ:

Երկրորդը կերթայ, ոչխարները կը խնդրէ բաշխել իրեն և, կը բաշխուի:

Երրորդը կերթայ, ձիերը կը խնդրէ, վերջապէս տան մեծ ու փոքր ամէն մէկ անդամը կերթայ մի բան կը խնդրէ և տան դոլվաթը կը բաշխէ հարաբար:

Կը մնայ միայն նոր-հարսը. տանեցիք կը պատուիրեն որ երթայ մի բան էլ ինքը խնդրէ. հարսը ներկայանալով,—

„Բարի լուս քի, Պապէ“ կասէ:

— Աստու բարին, կը պատասխանէ Պապէն

„Պապէ, դու ձնիս (ձվ ես):“

— Ես ձրը տան դոլվաթն իմ, խռովերիմ, կը թողիմ երթամ:

„Պապէ, մըր տանեցոց ամէկուն (ամէն մէկին) մէկ մէկ բան բաշխեցիր, ես լէ եկեր եմ խնդրիք կէնիմ քու յտնէն (ոտքերից) օր դու կերթաս, գտան Բազմ (միաբանութիւնը, միութիւնը) հետդ չտանիս, բաշխիս ընձի“:

—Բաշխեցի, գնա ընդ գլուխ. (ախուրի) իմ տեղ փռէ հագրէ, (պատրաստէ) էլ չեմ երթայ, որ շէտի չտանիմ հետս ես չուր երթամ. տան մեծ ու պղտիկ խուրբան (մատաղ) թրղ եղնին քու ոտաց տակ. բ. Անասուն մի ծախած ժամանակ, պոչից փուռջ մի հու կը քաշեն, որ դուրսը կամ բարաքաթը մնայ տուն, չերթայ անասունի հետը:

Դ. Դրկեց դրկեցի ալիւր փոխտուած միջոցին, մի բուռ չետ կառնէ, որ բարաքաթը չերթայ ուրիշի տունը:

Դ. Արագ վառելուց չետոյ տախտ չեն աւելեր և աղբը դուրս չեն թափեր նոյն նպատակով:

8) Հիւր երբ կուգա.

ա. Եթէ կատուն իւր քիթը քորէ կամ թափիկը լիզէ:

բ. Երբ խմոր շաղեն կամ հաց թխեն և մի պատտա թռնայ ընկնայ մի կողմը:

գ. Երբ երեխայք ձիու նմանեցնելով փայտի վրայ հեծնեն և ման փան:

9) Երբ ճանապարհորդ կը լինին.

ա. Երբ ոտքի տակ քորուի:

բ. Երբ երազի մէջ կռի տեսնեն.

10) Մագ.—ա. Սափրած մազերը ոտքի տակ չեն ձգեր, որպէս

զի գլուխը չցաւի:

բ. Մազերու ճաշը եթէ երէտ-ը լինի, ունեցողի բախտը չաթալ (երկհիւղ, անյաջող) է, կասեն:

11) Այգ.—Աչքի սառելը կամ պաղիլը (անթարթ, բայբայ նայելը) հեռաւորին, պանդուխտին շուտով վերադարձը ցոյց կուտայ:

Այաց թերթ երունքի վրայ եթէ շէտ նստի, կասեն աչքը շալակ է շալակել և շալակ ունեցող հիւր կուենան:

12) Ականջ.—Ականջը երբ ձայն հանէ, (կանչել) մատը դնելով ականջի մէջը, կասեն. խէր, խէր, խէր (բարի լինի), և կսկսեն մի քանի անուաններ համբել, կանչելը որ անուան վրայ որ դադարեց, նոյն անուան անձն է չիշողը:

13) Քիթ.—Երբ երկու անձ խօսեն և երրորդ մի (մանաւանդ եթէ վերջինս փոքր-երեխայ լինի) փուռգայ, „տեսար կասեն. մեղաւորն ըսեց, արդար վիեց (վկայեց)“, այսինքն իւր խօսքը հաստատեց:

14) Ձեռք.—Աջ ձեռքը որ քորուի, դրամ կտանան, ձախը, դրամ կը ծախսեն: Աջ ձեռքի քորուելու ժամանակ կը պագեն և կը դնեն զլիտու վրայ:

Մորթուած անասունը եթէ շատ տառապի, մորթողի չէտ ծանր էր, կասեն: Որպէս զի կենդանին շուտով շունչ փչէ, մորթողի դանակը կը դնեն կենդանու մարմնու վրայ:

15) Սիրս.—Մի մարդու լաւ կամ վատ սիրտ ունենալը, նորա մորթած կենդանու սրտին նայելով կըմացուի. եթէ վերջինս զուարթ և պայծառ է, մորթողն ևս, կասեն, զուարթ, պայծառ և անխեռ սիրտ ունի:

16) Ոսֆ.—Պատկած մարդու վրայով քաջութիւն նորից իւր քննէ քննելու է:

Տեղ մի երթացողը, առաջ պէտք է ուրախ ընթաց (ձղէ), որ գործը յաջողուի:

Ոտքի տակ որ քորուի, ճամբայ երթալու նշան կը համարուի:

17) Յաջողութիւն.—Գործի համար երբ ճանապարհ ելնեն, և առաջին անգամ քաջութիւն աման ունեցողի հանդիպեն՝ անշուքութիւն կը համարուի և, հակառակը:

Փունգալը ապագան գուշակելու նշան կը համարուի. գործի ձեռնարկելու կամ ճանապարհ երթալու ժամանակ՝ եթէ մէկ անգամ փրփուցան մէկը՝ քաջութիւն (համբուրութիւն) կասեն, և չպէտքէ գործի երթալ, իսկ երկու անգամ՝ անապահովութիւն:

18) Բախտ.—Անկատից դէպի գազաթը գնացող մազերու մէջ տեղի ուղիղ գծիկն կանուանեն քաջութիւն. եթէ գիծն ուղիղ է՝ տէրը բախտաւոր է, եթէ զոյգ է՝ անապահով, եթէ ճուռ ու մուռ է՝ տէրն անբախտ է:

բ. Մէկի դիմաց վարտիքի խառնուելն չեն կապեր, որպէսզի նորա քաջութիւն քաջութիւն:

գ. Անապահարհին պատահող երկու կանանց մէջ տեղովը չեն անցներ, որպէսզի քաջութիւն քաջութիւն:

դ. Երեխայոց գտակի վրայ ձկան դիտու խառնուելը կը կապեն, որ բախտաւոր լինեն:

Բաղդը կը կոչուի նաև Ֆալաք (Ֆէլէք), որուն ժողովուրդը Տալ քաջութիւն նման անձնաւորութիւն տուած է:

«Ֆալաքը ջրտրկուր (ջուր անող, ջուր բաշխող, ջրպան) մարդ մէ, հալորէ (ալուոր), վին (որու) առուի հետն օր ջուր շատ թողեց՝ էն մարդ դօրվաթուր (հարուստ) կեղնի, վին օր քիչ թողեց՝ աղքատ»:

Ամէն մի ձախորդութեան, անյաջողութեան պատահելու ժամանակ, աղքատ, թշուառ և անպիտան լինելու պարագային՝ սովորաբար Ֆալաքից կը գանգատուեն.— «Մի, Ֆալաք, Աստուած գբու տուն ալիբէ, յօրին՝ իդա բան հըմա կէնիս» կամ Ֆալաք բու երկու լուս քօռնայ... Ֆալաքի ձեռք կոտրէր..

Տանիկներ ուղղակի քնն, քաջութիւն և անպիտան կը հաչոցեն Ֆալաքին, երբ մի անյաջողութեան պատահեն:

Երագգ.—Երբև աստուածային յայտնութիւն երազին մեծ նշա-

նակութիւն կուտայ ժողովուրդը, ասելով, «երազ կայ, ճշգրիտ է»։ դորա համար երբ մէկը ուզէ տեսած երազը պատմել, լսողները պարտաւոր են նախապէս ասել. «Աստուած ի՞նչ (բարի) էնէ»։

Վատ երազները շատ գէշ տպաւորութիւն կը թողնեն ժողովրդի վրայ, և այդ տեսակ երազներ տեսնողը շատ մարդոց յայտնելով, բացատրութիւն ստանալուց յետոյ, Աստուծոն կը դիմէ աղերսելով խնդրելու. «որ չար երազն ի բարին դարձու»։

Երազներից շատերուն ևս հաւատ չեն ընծայեր. անուանելով իւր (երևակալութիւն). իւր-իւր երազները, ինչպէս ժողովուրդի փորձառութիւնը գտած է. կ'առաջանան հետևեալ պատճառներից. 1. երեկոյն ինչ առարկայի մասին որ լսօսեն, երազի մէջ նոյն առարկան կը տեսնեն. 2. Եթէ շատ անօթի քնի մէկը, երազի մէջ անշուշտ հաց կը տեսնէ և այլն։

Ցնորական երազներ կառաջանան նաև «գիշերուայ երկարութիւնից»։ օր. աշնանային երկար գիշերները տեսնուած երազներուն ժողովուրդը հաւատ չընծայեր, անուանելով «եօթ շաբթներու երազ»։

Փետրուար ամսուայ մէջ տեսնուած ցնորական երազներն ևս կը վերագրուեն «շօթերու», որոնք քնի մէջ մարդը կը խաբեն սուտ երազներով։

Երազներու բացատրութիւնը.—1. Երազներից մի քանիսը բոլորովին հակառակ նշանակութիւն ունին. օրինակ, եթէ մէկը երազով տեսնեն մեռած, կը նշանակէ, որ նա շատ կապրի։

2. «Վիրակնաւոր» երազը թէև մինչև կէսօրին անպատճառ կը կատարուի, բայց սուտ նշանակութիւն ունի։

3. Մնացած բոլոր երազներուն, ժողովուրդի փորձառութիւնը լւրաքանչիւրին մէկ մէկ նշանակութիւն յատկացուցած է, օրինակ. երազով «պատարագ» տեսնելը կը նշ. իւր. «Քուրդ կամ Տաճիկ», «Ռուբ», «ցորեն», «յարդ», քն. «խաղող», անձրև, «ատամ ընկնելը» — իւր-իւր մեռել և այլն և այլն։

Երազներից շատերու նշանակութիւնը ըստ պատճառներու մեկնութեան՝ բոլորովին համանման է «Իֆիմէրդի»-ի մէջ գրուած Դոմէ. Բոմբոնի անուամբ յայտնի երազահանի մեկնութեան, և պէտքէ կարծել որ Իֆիմէրդիի երազներն նոյնպէս զուտ ազգային են և հաւաքողը մարդարէին անուամբ կնքեր է՝ որպէս զի ընդունելութիւն գտնեն։

Այն երազները, որոնց մեկնութիւնը կանանց և պտաւներուն յայտնի է, արդէն վերև չիշուած յայտնի նշանակութեամբ կը մեկնուին և երազ տեսնողներուն բաւականութիւն կուտան, իսկ երբ «Լիւքէ մտքէ վեր բան է», կը դիմեն Ադոմէրի (Իֆիմէրդի) ունեցող տիրացուաց, քահանայից և վարդապետներուն, որոնք ինչ ինչ և անուանելով երազները կը մեկնեն։

Տեսե՛լք.—Պառաւ հա՛փսէն ծանր հիւանդացաւ, քառսուն օր անթարթ մնաց պարկուկ, ձէն ցրուաւ մէջ գեղին՝ թէ հա՛փսէն գացեր է Կոնստանտնուպոլիս, երբ որ առողջացաւ՝ գեղի մեծ ու պզտիկ գացին նորա մօտ և իւրաքանչիւրն իւր տեղը իւր ծնողաց, ազգականաց «քէֆն ու հալը» հարցուց, թէ է՛նդիւր աշխարհք իմա՛յ է, իմա՛ չէ, դրախտն իմա՛յ է, դժոխքն իմա՛յ է, արդարներ ի՛նչ կէնին, մեղաւորներն ի՛նչ, հա՛փսէն քառսուն օր՝ որ անթարթ պարկած էր, պտտեր էր է՛ն դիւր բոլոր աշխարհքը, տեսեր էր զարդարն ու զմեղաւոր, զըրբախտն ու զդժոխք...

Ըռաջ եկաւ Կրպէ՛ն՝ հարցուց իւր հօր տեղը. «հա՛փսէ, ասաց Կրպէն, թէ զՍատուած կը սիրես՝ դու զողորդն ըսիս, իմ պապու (հօր) տեղն իմա՛յ էր»:

—Սատձուն աւտնաս, Կրպէն (մարդաստան) տեղմ՝ էր, սեղան սուփրէն՝ Սատձու ստեղծած ամէն բարութենով (բարիքներ) լիք դրուկ էր, անմահութենի աղբուրն ուր չառջև կը բոխէր (բոլխէ), կուտէր. կը խմէր՝ կուրախնէր:

«Մեր գեղի ուէսի տեղն իմա՛յ էր»:

—Վա՛յ, իմ չանարժան հուգուն, Սատուած իմ Կրպէն Կրպէն (Թշնամուն) նշանց չիտայ, հոգով մարմնով կորուկ էր մէջ Կոնստանտնուպոլիս, խանջ մ՝ երկինք (կանչին) մէկ գետինքն էր, կէնէր ու չէնէր, չըր կրրեն (կարենալ) օր գուր ոտներ պրծուցէր կարսի մէջէն:

«Նին—ջոջ ուէսին»:

—Քաղցի մէքար դրուկ էր վըր վզին ու պառեկին, գիշեր ու ցերեկ կը գլրուցուցէն (պտտեցնել), ուր կեցած տեղ հըմալ մուտ էր, օր մատ խտէն մարդու աչք՝ չըր տեսնի:

«Տէրտրոջ (քահանայի) տեղն իմա՛յ էր»:

—Տէրտրէր՝ հարի չօքեր (ճնկներ) չքուկ էր (խրուած) մըջ տիլ ու ճնճիտին (ճախին), էն գահ օր պատարագ կէնէր, կենէր դուս, պատարագն օր կը վերջանէր, էլման կը չըքէր մըջ տըլին¹⁾:

«Գեղի գգրի տեղն իմա՛յ էր»:

—Գպլի տեղ ցուցուցին (ցոյց տուին) ընձի, լէ (ալլ) գերես չը տեսայ, չտտով գլլտով կորուկ էր:

«Է՛լ ի՛նչ տեսար»:

—Սա ինչ գինամ, աղբէր, ջաղցպնից Կրպէն, (ալուր էր գողցի մուշտարուց), փինաջուց (հնակարկատ կոշկակար) կաշի կուգէն (կաշի էր գողցի), հերուն կը խտէն ի կողեր, թարգուց կտոր կուգէն, ասեղ կը դարկէն ի կշտներ... և ալն և ալն:

¹⁾ Տեսե՛լք գնացողները կենդանի մարդոց տեղն ևս կը տեսնեն: